



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Մայիս 2017, թիվ 5(105)

Խմբագրական

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՆՋԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

«Համայնքների ֆինանսիստների միավորում» (ՀՖՄ) հասարակական կազմակերպությունն արդեն երկրորդ տասնամյակն է, ինչ զբաղվում է ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի հիմնախնդիրներով՝ փորձելով իր համեստ ներդրումն ունենալ համակարգի կայացման, օրենսդրության բարելավման եւ բարեփոխումների իրականացման գործընթացներում:

2015 թվականից սկիզբ առած վարչատարածքային բարեփոխումների կամ, ինչպես առավել հայտնի է, համայնքների խոշորացման տնտեսագիտական հաշվարկների իրականացման, խոշորացման հայեցակարգի մշակման գործընթացում կազմակերպությունը նույնպես ունեցել է որոշակի դերակատարում՝ մշտապես սատար կանգնելով եւ աջակցելով պետական կառավարման մարմիններին՝ իրականացնելու Հայաստանի Հանրապետության համար կարեւոր նշանակություն ունեցող այս բարեփոխումները: Կազմակերպության փորձագետները մասնակցություն են ունեցել ոչ միայն համայնքների խոշորացման փնջային եւ շրջանային մոդելների ուսումնասիրության, փորձագիտական գնահատման աշխատանքներում, այլեւ խոշորացման պիլոտային եւ հիմնական փնջերի ձեւավորման գործընթացում:

Կազմակերպությունը նաեւ իրականացրել է վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ՝ կազմակերպելով տարատեսակ հանրային քննարկումներ եւ հանդիպումներ բոլոր հնարավոր թիրախային խմբերի հետ, տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն համայնքների խոշորացմանն առնչվող յուրաքանչյուր կողմի համար:

Սակայն, միեւնույն ժամանակ, կազմակերպությունը միշտ ունեցել է այն հստակ գիտակցումը, որ վարչատարածքային բարեփոխումները, առաջին հերթին, պետական քաղաքականության մշակման եւ իրականացման դրսեւորում են:

Այսուհանդերձ, հավատարիմ մնալով երկրում վարչատարածքային բարեփոխումների իրականացման գործին, կազմակերպությունն այսօր հայտարարում է, որ ուղղակի առնչություն չունի ներկայումս տեղի ունեցող՝ համայնքների խոշորացման գործընթացի հետ: Սրա հիմնական պատճառը խոշորացման իրականացվող առկա գործընթացում ՀՖՄ փորձագիտական կարծիքը եւ գնահատականները հաշվի չառնելն է: Համայնքների խոշորացման փնջերի ձեւավորման հարցում կան մի քանի ճշգրտող հակասություններ, որոնց վերաբերյալ որեւէ տրամաբանական հիմնավորում չկա: Այնպես որ, ՀՖՄ-ն չունի անմիջական մասնակցություն օրակարգ մտած վարչատարածքային փոփոխությունների հաջորդ փուլի՝ համայնքների խոշորացման նոր փնջերի ձեւավորման հետ:

Հատկանշական է, որ բարեփոխումների երրորդ փուլի խոշորացման փնջերը կազմելիս պետական լիազոր մարմինը ոչ մի փորձագիտական կարծիք հաշվի չի առել, փնջերը կազմվել են գրասենյակային գաղտնի միջավայրում, իսկ արդյունքների մասին հանրության լայն շրջանակներին հայտնի է դարձել միայն օրենքի նախագիծը ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվելուց հետո: Սա ավելի քան անընդունելի է եւ արդարացիորեն տեղիք է տալիս շահագրգիռ կողմերի մտահոգություններին:

Այստեղ է, որ ներկայումս իրականացվող գործընթացները ծնում են մի քանի հիմնարար հարցեր, որոնց պատասխանները ոչ մի կերպ ստանալ չի հաջողվում:

Այդուհանդերձ, կազմակերպությունը հայտնում է իր պատրաստակամությունը՝ համագործակցելու պետական լիազոր մարմնի հետ՝ համայնքների խոշորացման հետագա փուլերում առավել ռացիոնալ եւ տրամաբանված ճանապարհներ գտնելու հարցում:

Հուսով ենք, որ պետության զարգացման ընթացքում այսպիսի կարեւոր գործընթացների նկատմամբ, ինչպիսիք են երկրի վարչատարածքային բարեփոխումները, վերաբերմունքի ու գործելանոճի որոշակի փոփոխություն տեղի կունենա, եւ հետագա քայլերը կիրականացվեն առավել կշռադատված եւ փորձագիտական մոտեցումներ դրսեւորելով:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՀԱԿՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խմբագրական խորհրդի անդամներ

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ



«Համայնք-ՀամաՏեղ»-ի գրուցակիցն է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը:

- Պարոն Գիլոյան, ինչպես հայտնի է, շարունակվում է համայնքների խոշորացման գործընթացը: Արդեն իսկ քննարկման է դրվել «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը, համաձայն որի 380 համայնքների խոշորացումից ձեւավորվելու է 31 նոր բազմաբնակավայր համայնք: Վերջնական է այս նախագիծը, թե՞ ընդունվելու են առաջարկներ:

- Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումները մեկնարկեցին մի քանի տարի առաջ, որոնք, համաձայն ՀՀ կառավարության որոշգրած քաղաքականության, պետք է ավարտվեն 2017-18թթ.: Այսինքն, համայնքների խոշորացումը պլանավորված գործընթաց է, որի շրջանակներում նախորդ տարի ձեւավորվեց 18 խոշորացված բազմաբնակավայր համայնք: Իսկ թե քանի համայնք կունենանք գործընթացի ավարտին, դեռեւս հստակ չէ, պարզ է միայն, որ այս տարվա ծրագրով 380 համայնքներից ձեւավորվելու է 31 համայնք:

«ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծն արդեն իսկ ներկայացված է կառավարություն, որտեղ քննարկվելուց հետո կներկայացվի ԱԾ: Ինչ վերաբերում է այն հարցին՝ նախագիծը վերջնական է, թե ոչ, ապա ասեն, որ այն քաղաքական որոշում է եւ ամենավերջին պահին անգամ կարող է փոփոխվել:

Էջ 2 →

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

2017թ. մայիսի 2-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (<https://www.e-draft.am/projects/193/>) քննարկման դրվեց «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որում ներկայացված են վարչատարածքային բարեփոխումների հաջորդ փուլում խոշորացվող համայնքների փնջերը: Ընդհանուր առմամբ, ըստ նախագծի, 380 համայնքների միավորմամբ ձեւավորվելու է 31 համայնք:

Ներկայացված նախագիծը, բովանդակությունից անկախ, ինքնին գովելի է, քանի որ շարունակականություն է ապահովում դեռեւս 2015թ. մեկնարկված վարչատարածքային բարեփոխումների համար: Այնուամենայնիվ, կան մի քանի նկատառումներ, որոնք անհրաժեշտ ենք համարում արծարծել: Առաջինն, իհարկե, խոշորացման ենթակա համայնքների փնջերի ձեւավորման տրամաբանությունն է: Դատելով վերը նշված նախագիծը՝ վերադարձ է կատարվում հորիզոնային Հայաստանի նախկին շրջաններին (Ճամբարակի, Ապարանի, Անիի, Կապանի, Սիսիանի փնջերը եւ այլն): Ենթադրվում է, որ օրենքի նախագծի տեղեկանք-հիմնավորումներում պետք է նշված լինի համայնքների խոշորացման այսպիսի ընտրություն կատարելու մոտեցումը:

Էջ 4 →

← էջ 1

Մինչև կառավարություն ներկայացնելը, այս նախագիծը եւս բավական երկար ճանապարհ է անցել...

Այսօր այն, ի թիվս բազմաթիվ այլ օրենսդրական, իրավական նախագծերի, տեղադրված է e-draft.am կայքում...

Ավելին, շուտով ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության աշխատակազմով՝ շահագրգիռ հասարակական եւ միջազգային կազմակերպությունների հետ այցելելու ենք համայնքներ, բնակիչներին ներկայացնելու ենք մեր մոտեցումները...

Քարեփոխումների մեր ընտրած մոդելն այնքան լավ է, որ մենք չենք ամաչում մարդկանց առաջ կանգնել ու ներկայացնել այն:

Փորձելու ենք մարդկանց բացատրել, որ խոշորացման արդյունքում ընդամենը կառավարման ապարատն է միավորվում, որ համայնքի ղեկավարին փոխարինում է վարչական ներկայացուցիչը...

Այսօր հաճախ է շահարկվում այն միտքը, որ ընդօրինակել ենք եվրոպացիներից: Ոչ, պարզապես ուսումնասիրել ենք եվրոպական եւ մեր հարեւան երկրների փորձը...

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ



րում համարվում է լավագույններից մեկը: Իսկ, եթե վերցված են որոշակի բաներ, ապա վերցված է միայն լավը:

- Ի՞նչ տրամաբանությամբ է հաստատվել խոշորացվող համայնքների ցանկը, կառուցվածքը:

- Խոշորացվող համայնքների ցանկն ընտրվում է համաձայն 2011թ. ՀՀ կառավարության հաստատած հայեցակարգի: Այսինքն, հաշվի է առնվում բնակչության թիվը, համայնքների ֆինանսական, հողային հաշվեկշիռը, առկա ենթակառուցվածքները, նաեւ այն հանգամանքը, թե որքանով են այդ համայնքները սերտացված, եւ արդյունքում ստացվում է այնպես, որ մի փնջում ներառվում է 10, մյուսում՝ 20 համայնք: Եվ, բնավ էլ պարտադիր չէ, որ ձեւավորվող բոլոր փնջերի դեպքում լինեն հայեցակարգով սահմանված բոլոր չափորոշիչները:

- Պարոն Գիլոյան, չե՞ք կարծում, որ պետք էր սպասել, տեսնել արդեն խոշորացված համայնքներում կատարված փոփոխությունները, արդյունքները, այնուհետեւ անցնել գործընթացի հաջորդ փուլին:

- Ամբողջ աշխարհում նման փորձ չկա: Ինչու՞ ենք մենք ուզում տարբերվել: Ամբողջ աշխարհում նմանատիպ խոշորացվածքներում են մեկ օրում, իսկ մենք արդեն հինգ տարի է, այս գործընթացի մեջ ենք ու անընդհատ կրկնում ենք՝ սպասե՛ք՝ տեսնե՛ք, թե ինչ կլինի: Մեծ արդյունքների համար ժամանակ է պահանջվում, բայց մենք այսօր կարող ենք արձանագրել, որ կարճ ժամանակում էական ձեռքբերումներ արդեն իսկ կան: Եվ այդ ձեռքբերումներն արձանագրվել են ոչ թե դուրս կազմակերպությունների կամ պետական աջակցությամբ, այլ համայնքային միջոցներով:

Նախորդ տարի ձեւավորված առաջին երեք փնջերի համար կարելու էր ձեռքբերում են համարում այն, որ, եթե նախկինում շատ համայնքների բնակիչներ երկար ճանապարհ էին անցնում Գորիսում կամ Ալավերդիում հողի հարկ կամ գույքահարկ վճարելու համար, ապա այսօր ստեղծված են գրասենյակներ, որտեղ կենտրոնացված են այդ բազաները, կա ցանցային կապ, այսինքն՝ այդ ծառայությունները մոտեցրել ենք բնակիչին:

Ընդամենը վերջերս լուծվեց եւս մեկ կարելու հարց. տարիներ առաջ Գոշ, Խաչարձան, Աղավաճվանք եւ Հոլք համայնքները, որոնք այսօր արդեն Դիլիջան բազմաբնակավայրի համայնքի մաս են կազմում, գազաֆիկացվել էին Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳՀՄՀ) ծրագրով, սակայն բյուջեի սղության պատճառով նշյալ համայնքների կողմից համաֆինանսավորում չէր եղել: Արդեն այս հարցը լուծվել է Դիլիջան բազմաբնակավայրի համայնքային միջոցներով: Այսինքն, սա եւս մեկ ապացույց է, որ մեծ բյուջեով հնարավոր է ավելի շատ ու մեծ արդյունքների հասնել:

Համայնքային միջոցներով մեծ աշխատանքներ են կատարվել նաեւ համեմատաբար նորաստեղծ ու հեռավոր Սարապատ համայնքում, որտեղ իրականացվել է գյուղամիջյան լուսավորության ցանցի վերանորոգում, գնվել է 2 հատ մոտոբլոկ՝ տնամերձ հողամասերի մշակման համար, 2 բուլդոզեր՝ միջհամայնքային եւ դաշտամիջյան ճանապարհների հարթեցման, նաեւ՝ ձնամաքման համար:

Համայնքային միջոցներով մեծ աշխատանքներ են կատարվել նաեւ համեմատաբար նորաստեղծ ու հեռավոր Սարապատ համայնքում, որտեղ իրականացվել է գյուղամիջյան լուսավորության ցանցի վերանորոգում, գնվել է 2 հատ մոտոբլոկ՝ տնամերձ հողամասերի մշակման համար, 2 բուլդոզեր՝ միջհամայնքային եւ դաշտամիջյան ճանապարհների հարթեցման, նաեւ՝ ձնամաքման համար:

Աշոցքում եւս ունենք հաջողություններ. Բավրայում անցկացվել է գիշերային լուսավորության ցանց, ձեռք է բերվել թրթուրավոր բուլդոզեր, արդեն գործում են Ղազանչի եւ Սեպասար բնակավայրերի մանկապարտեզները...

Թվարկումը կարելի է շարունակել, սակայն ամենակարեւոր ձեռքբերումն այն է, որ ստեղծվել է մրցակցային աշխատակազմ եւ ավագանի, որոնց նիստերը հեռարձակվում են առցանց՝ հնարավորություն տալով բնակիչին հետեւել, լինել տեղեկացված, նաեւ՝ մասնակից:

- Արդյո՞ք առաջին փուլի հետաքրքիր լուծումները լինելու են նաեւ երկրորդ փուլում, ինչպես օրինակ՝ ուսուցման ծրագրեր,

համայնքային կենտրոնների ստեղծում, ավագանու անդամների ուսուցում...

- Այսօր աշխատանքներ են տարվում նախորդ տարի աշնանը ձեւավորված բազմաբնակավայր համայնքներում եւս վերոնշյալ ծրագրերի իրականացման ուղղությամբ. անհրաժեշտ տեխնիկական կա, գրասենյակների նախագծերը կան եւ արդեն կառուցվում են: Նոր խոշորացվող համայնքների դեպքում էլ ամեն ինչ անելու ենք, որ իրագործենք այդ ծրագրերը, հատկապես՝ գրասենյակների ստեղծումը, որոնց շնորհիվ մի շարք ծառայություններ մոտեցնում ենք բնակիչին:

- Պարոն Գիլոյան, խոսակցություններ կան, որ խոշորացվող բազմաբնակավայր համայնքներում այլեւս ներդրումային ծրագրեր չեն լինելու, արդյո՞ք այս հանգամանքը չի անդադառնա գործընթացի վրա:

- Ներդրումային ծրագրերն իրականացվել են Ամերիկյան կառավարության (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով) եւ Շվեյցարիայի կառավարության (Շվեյցարական զարգացման գործակալության) ներդրումներով, եւ համայնքները հիմնականում տեխնիկա ձեռք բերելու ցանկություն են հայտնել, այսինքն՝ միջազգային կառույցները համայնքներին աջակցել են տեխնիկայով:

Մենք արդեն դիմել ենք միջազգային կազմակերպություններին եւ հույս ունենք, որ դրական արդյունք կլինի, որովհետեւ իրենք էլ են ձգտում ներդրումներ անել այնպիսի համայնքներում, որ արդյունավետ լինի:

Իսկ եթե միջազգային աջակցություն էլ չլինի, մենք կփորձենք այլ ծրագրերով, պետության օժանդակությամբ այդ տեխնիկական տրամադրել համայնքներին:

Այսինքն, ասել, որ ներդրումային ծրագրեր այսուհետ չեն լինելու, եւ այս հանգամանքը կարող է անդադառնալ գործընթացի վրա, ճիշտ է. բոլոր բնակչությունները տեսնում են նրան, որ արդյունքը պետք է դրական լինի:

ՀԱՍՄԻԿ ԲԵՐՈՒՅԱՆ

2016 թվականից «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագրի շրջանակներում թողարկվել է <http://celog.am> պորտալը:

Պորտալի ստեղծման նպատակներն են.

• ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների լուսաբանում

• ՀամաՏեղ ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվության տարածում

• ՀամաՏեղ ծրագրի անդամ կազմակերպությունների եւ աշխատակիցների միջեւ տեղեկատվության փոխանակում:

Պորտալում առկա են ՏԻՄ ոլորտին վերաբերող վերջին, ամենաթարմ տեղեկությունները, հայտարարությունները, ոլորտին վերաբերող օրենսդրությունն ու նորմատիվ փաստաթղթերը, պետական պիլոտային ծրագիրը: Զաղաքացիները կարող են կայքի վերաբերյալ թողնել մեկնաբանություններ, կարծիքներ, ինչպես նաեւ բաժանորդագրվել՝ նորություններ, հայտարարություններ եւ իրադարձությունների մասին իրագեղում ստանալու համար:

Պորտալը պարունակում է ՏԻՄ ոլորտի վերաբերյալ հետազոտությունների, ռազմավարությունների, հայեցակարգերի, իրապարակումների հարուստ շտեմարան:

ՏԻՄ ՈԼՈՐՏԻ ՇՏԵՄԱՐԱՆ

The screenshot shows a presentation slide with the following text:

Հանրային մասնակցություն

Տեղական ինքնակառավարմանը

Մեր մասին, Բարեփոխումներ, Փայմանքներ, ՀԱՇՎԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐԱՄԱՐՆ, ՄԵՐՈՒ, ՊԵՏԱՆՎԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ, ԾՐԱԳՆԻՑ, ԱՎԵԼՈՒ,

Կայքագրվել է www.celog.am պորտալի շնորհակալություն

Հունիսի 12-ին Եվրամիության համագործակցության հիմնադրամի օգնությամբ ՀՀ-ում համայնքային մասնակցությունների ստեղծումը

Գրքի շնորհակալություն

2016 թվականի 6-ին «Երան» Գրքերի Գրչուկի կողմից տեղի ունեցավ «Տեղ»...

Ուղարկված օրենսդրության փոփոխություններն ու Այլընտրանքային օրրոգում բնակչության ուղեգրի մասին Հանրային մասնակցության ծրագրի շրջանակներում ընդունված օրենսդրության մասին

Հայտատու - Եվրոպայի հարկերը

Հայտատուի նախագծերում կառավարողական օրենսդրության փոփոխությունների կառավարման հարցերը»

ՎԵՐՁԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԾՐԱԳՆԻՑ

րան: Այստեղ կարելի է գտնել նաեւ ծրագրի շրջանակներում հրատարակվող «Համայնք-ՀամաՏեղ» թերթի բոլոր համարները: Պորտալում առկա է տեսանյութերի հարուստ շտեմարան, մասնավորապես, ծրագրային միջոցառումների մասին

պատմող տեսահոլովակներ, «Տիմատիկա» հաղորդաշարի թողարկումները, «Մամուլի ակումբ - ՀամաՏեղ» հաղորդաշարի թողարկումները, «Մարդու տեղը» խորագրով մուլտիմեդիա կայքերը եւ այլն: Պորտալում առկա են նաեւ տարբեր տեղեկատվական էջեր, օրինակ՝ «Հաճախ տրվող հարցեր», «Օգտակար հղումներ», «Գրադարան», «Հաշվետվություններ» եւ այլն: Պորտալի միջոցով իրականացվում են նաեւ առցանց հարցումներ:

Համացանցային ընդունարան բաժինը պորտալի այցելուներին հնարավորություն է տալիս տարբեր ոլորտների փորձագետներին առցանց ուղղել հարցեր եւ ստանալ դրանց պատասխանները:

Պորտալը նախատեսված է «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագրի շրջանակներում գործող համընկերության, ծրագրում ընդգրկված համայնքների, ինչպես նաեւ՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, լրագրողների եւ հանրության լայն շրջանակների համար:

Իր թողարկման պահից պորտալի այցելությունների քանակը կազմել է ավելի քան 14700:

Սեֆ. ԼՐ.

ՑԱՆԿ

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվող՝ խոշորացվող համայնքների

Կարող եք ձեր առաջարկություններն ուղարկել նախագծի հեղինակներին՝ <https://www.e-draft.am/projects/193/about> էջում բացվող պատուհանով:

Հ/հ	Մարզի անվանումը	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1	Արագածոտն	Ապարան	Ապարան ք., Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Չորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Քուչակ
		Արագածավան	Արագածավան, Արտենի, Գետափ, Թլիկ, Լուսակն
		Ծաղկահովիտ	Ալազյազ, Ավշեն, Բերքառատ, Գեղաղիր, Գեղաձոր, Գեղարոտ, Լեռնապար, Ծաղկահովիտ, Ծիլքար, Կանիաշիր, Հնաբերդ, Ճարճակիս, Մելիքգյուղ, Միջնատուն, Միրաք, Լորաշեն, Շենկանի, Ջամշու, Ռյա թագա, Սաղունց, Սիփան, Վարդաբլուր
2	Գեղարքունիք	Ճամբարակ	Ճամբարակ ք., Աղբերք, Այգուտ, Անտառամեջ, Արծվաշեն, Արտանիշ, Բարեպատ, Գետիկ, Դպրաբակ, Դրախտիկ, Թթուջուր, Կավական, Չորավանք, Ճապկուտ, Մարտունի, Շողակաթ, Ջիլ, Վահան
		Վարդենիս	Վարդենիս ք., Ագատ, Ախպրաձոր, Ակունք, Այրք, Գեղամարակ, Գեղաքար, Լճական, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Կութ, Ներքին Շորժա, Լորաբակ, Շատրոբեք, Շատվան, Ջաղացաձոր, Վանեվան, Վերին Շորժա, Տորֆավան
		Մասրիկ	Մեծ Մասրիկ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամասար, Դարանակ, Զառիվեր, Ծափաթաղ, Կախակն, Կուտական, Լորակերտ, Սոթք, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ
3	Լոռի	Հաղպատ	Ալավերդի ք., Ակներ, Աքորի, Կաճաճկուտ, Ջիլիգա, Ծաղկաշատ, Հաղպատ
		Լավվար	Ախթալա ք., Ախթալա, Առողջարանին կից գյուղ, Բենդիկ, Թեղուտ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ, Շնող, Փոքր Այրում, Քարկուփ
		Ստեփանավան	Ստեփանավան ք., Ագարակ, Արմանիս, Ամրակից, Բովաձոր, Գարգառ, Գյուլագարակ, Լեջան, Լոռի Բերդ, Կաթնաղբյուր, Կուրթան, Հոբարձի, Ուռուտ, Ուրասար, Պուշկինո, Սվերդլով, Վարդաբլուր, Յաղրան
		Տաշիր	Տաշիր ք., Ապավեն, Արծնի, Բլագոդարնոյե, Գետավան, Գոգավան, Դաշտաղեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Կրուգայա շիշկա, Ջյունաշող, Չորամուտ, Մեղովկա, Մեծավան, Մեղվահովիտ, Միխայլովկա, Նովոսելցովո, Նորամուտ, Նորաշեն, Պաղաղբյուր, Պետրովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ
		Օձուն	Օձուն, Ամոց, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Կողես, Հագվի, Հովնանաձոր, Մղարթ
4	Կոտայք	Բյուրեղավան	Բյուրեղավան ք., Ջրաբեր, Նուռնուս
		Նաիրի	Եղվարդ ք., Արագյուղ, Բուժական, Զովունի, Զորավան, Սարալանջ
		Նոր Հաճն	Նոր Հաճն ք., Արգել, Գետամեջ, Թեղենիք, Մրգաշեն, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Քանաքեռավան, Քարաշամբ
		Չարենցավան	Չարենցավան ք., Ալափարս, Արգական, Բջնի, Կարենիս, Ֆանտան
		Ակունք	Ակունք, Զառ, Զովաշեն, Կապուտան, Կոտայք, Հատիս, Նոր գյուղ, Սևաբերդ
		Մեղրաձոր	Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Գոռոց, Հանքավան, Մարմարիկ, Փյունիկ
		Քասախ	Քասախ, Պոռչյան, Նոր Երզնկա
5	Շիրակ	Անի	Մարալիկ, Աղին, Անիավան, Անիպեմզա, Բագրավան, Բարձրաշեն, Գուսանագյուղ, Իսահակյան, Լանջիկ, Լուսաղբյուր, Հայկաձոր, Զիթհանքով, Չորակապ, Շիրակավան, Լորշեն, Ջրափի, Սառնաղբյուր, Սարակապ, Քարաբերդ
		Ախուրյան	Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Զրառատ
		Մարմաշեն	Մայիսյան, Լեռնուտ, Կապս, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հացիկավան, Հովունի, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Քեթի
6	Սյունիք	Կապան	Կապան ք., Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջաձոր, Արծվանիկ, Բարգուշատ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Դիցմայրի, Եղեգ, Եղվարդ, Խորանց, Խորձոր, Ծավ, Կաղնուտ, Չորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Լորաշենիկ, Շիկահող, Շիշկերտ, Շրվենանց, Չափնի, Սգնակ, Սյունիք, Սրաշեն, Սևաքար, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Օխտար
		Միսիան	Միսիան ք., Անգեղակոթ, Ախալթյան, Աղիտու, Աշտավան, Արևիս, Բալաք, Բնունիս, Բոնակոթ, Գետաթաղ, Դաստակերտ, Դարբաս, Թանահատ, Թասիկ, Իշխանասար, Լճեն, Լոր, Հացավան, Մուցք, Լժեհ, Լորավան, Շաղատ, Շամբ, Շաքի, Շենաթաղ, Որոտնավան, Ուլձ, Սավարդ, Վաղատիկ, Տոլորս, Տորունիք, Յղունի
		Քաջարան	Քաջարան ք., Անդրկավան, Աջաբաց, Բարիկավան, Գեղավանք, Գեղի, Գետիշեն, Լեռնաձոր, Կաթնառատ, Կավձուտ, Կարդ, Կիցք, Չագիկավան, Ներքին Գիրաթաղ, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Վերին Գեղավանք, Վերին Գիրաթաղ, Փոխարուտ, Քաջարանց, Քարուտ
7	Վայոց ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր ք., Ագարակաձոր, Գետափ, Գլաձոր, Վերնաշեն
		Արենի	Արենի, Աղավնաձոր, Արփի, Ամաղու, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Մոզրով, Զիվա, Ռինդ
		Եղեգիս	Շատին, Աղնջաձոր, Արատես, Արտաբույնք, Գետիկվանք, Գողթանիկ, Եղեգիս, Թառաթումբ, Կալասար, Հերմոն, Հորբատեղ, Հորս, Սալի, Սևաժայռ, Վարդահովիտ, Քարագլուխ
8	Տավուշ	Իջևան	Իջևան ք., Ագատամուտ, Ակնաղբյուր, Աճարկուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Բերքաբեր, Գանձաքար, Գետահովիտ, Դիտավան, Ենոքավան, Լուսահովիտ, Լուսաձոր, Խաչթառակ, Ծաղկավան (Իջևանի շրջ.), Կայան, Կիրանց, Մարիգյուղ գյուղ, Սեքար գյուղ, Վազաշեն
		Բերդ	Բերդ ք., Այգեձոր, Այգեպար, Արծվաբերդ, Իժաքար, Ծաղկավան, Մովսես, Նավուր, Ներքին Կարմիր աղբյուր, Նորաշեն, Չինարի, Չինչին, Չորաթան, Պառավաքար, Վարագավան, Վերին Կարմիր աղբյուր, Տավուշ

← էջ 1

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Ցավոք սրտի, այդ հիմնավորումը նախագծում չենք գտնում: Մյուս կողմից, համայնքների խոշորացման արդյունքում նախկին շրջանների վարչական սահմանները վերականգնելը չպետք է դիտարկել որպես բացասական երեւոյթ կամ խորհրդային ժամանակների կարոտախտ: Ամենեւին, սակայն այդ ամենի մեջ պետք է լինի որոշակի կուռ տրամաբանություն, փորձագիտական վերլուծություն, գնահատում եւ հիմնավորում: Ծիշտ է, աշխարհում ոչ մի վարչատարածքային բարեփոխում չի իրականացվել փորձագետների կողմից. վերջինս պետական կառավարման հստակ քաղաքականության իրականացում է, քաղաքական ակցիա: Սակայն նույն այդ քաղաքականությունը ցանկալի կլիներ իրականացնել փորձագիտական վերլուծության եւ գնահատման ամուր հենքի վրա, ինչը Հայաստանի պարագայում, բացառությամբ բարեփոխումների սկզբնական շրջանի, արդեն բացակայում է:

Հաջորդ նկատառումը վերաբերում է խոշորացված փնջերում, այն է՝ նոր ձեւավորված բազմաբնակավայր համայնքներում որոշակի վերլուծություններ եւ գնահատումներ իրականացնելուն: Նշենք, որ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության (ՏԿԶ) կայքում տեղադրված են 18 նոր ձեւավորված համայնքներում իրականացված աշխատանքների մասին տեղեկություններ, սակայն դրանք ուսումնասիրելով՝ պարզ է դառնում, որ դրանք ընդամենը իրականացված աշխատանքների պասիվ թվարկում են: Համայնքի պատշաճ կառավարման, համայնքի ֆինանսական միջոցների ծախսման արդյունավետության, խոշորացման արդյունքում կառավարչական ձեռքբերումների, թույլ տրված բացթողումների վերաբերյալ վերլուծություններ եւ գնահատականներ չկան: Նման վերլուծությունների առկայությունը կարելի է ոչ միայն նրանով, որ հստակ հնարավորություն է ստեղծվում՝ գնահատելու համայնքների խոշորացման գործընթացի առաջին քայլերը, այլ նաեւ հարուստ ուսումնասիրություն է հանդիսանում վարչատարածքային բարեփոխումների հետագա փուլերն իրականացնելիս ՀՀ Ազգային ժողովում կազմակերպվող քննարկումների համար:



Մյուս նկատառումը, որ կցանկանայինք անել, խոշորացման գործընթացում նոր ձեւավորված համայնքներում կապիտալ ներդրումների մասին է: Ուսումնասիրելով ՀՀ ՏԿԶ կողմից ներկայացրած նույն տեղեկանքները՝ տեսնում ենք, որ նոր ձեւավորված համայնքներում իրականացվել են որոշակի ծավալով կապիտալ ներդրումներ: Սակայն, առավել հանգամանալից ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ներդրումները իրականացվել են հիմնականում կամ համայնքային բյուջեի միջոցների հաշվին, կամ էլ միջազգային կազմակերպությունների ներդրումային ֆոնդերի հաշվին (որում փոքր մասնակցություն ունեն նույն համայնքի եւ պետական բյուջեները): Այսինքն, վստահորեն կարող ենք ասել, որ դոնոր ներդրումային ֆոնդերից հատկացումների բացակայության դեպքում նոր ձեւավորված համայնքներում խոշոր չափերի ներդրումների հարցը խիստ մշուշոտ է դառնում: Այս դեպքում էլ, համայնքի բնակիչների մոտ արդարացի բողոք է բարձրանում, երբ վերջիններս համայնքների խոշորացումից հետո համայնքային կյանքում որեւէ լուրջ փոփոխություն չեն տեսնում, կապիտալ ներդրումները նրանց տեսանելի չեն: Հարցը հատկապես արդիական է դառնում այն իմաստով, որ բարեփոխումների գործընթացը քննարկելիս անընդհատ խոսվում է նոր

ձեւավորված համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների թվի, ՀՀ-ում համայնքների ընդհանուր թվի նվազման եւ այլ թվային տվյալների վերաբերյալ: Սակայն շատ քիչ է ներկայացվում այն ֆինանսական ներարկումների մասին, որոնք պետությունը պատրաստվում է իրականացնել այդ նույն՝ նոր ձեւավորված համայնքներում, որպեսզի բարենպաստ մեկնարկային պայմաններ ստեղծի ողջ հանրապետությունում իրականացվող բարեփոխումների հաջողության համար:

Վարչատարածքային բարեփոխումների համատեքստում առավել քան տեսանելի է դառնում պետության կողմից դեպի համայնքները լիազորությունների հետագա ապակենտրոնացումը: Ունենալով ֆինանսապետ եւ մարդկային ռեսուրսներով ավելի ապահովված համայնքներ՝ ժամանակը չէ՞ արդյոք առավել լրջորեն իրականացնելու լիազորությունների ապակենտրոնացման գործընթացը՝ վերջիններս պատվիրակելով համայնքներին, որպեսզի բնակիչների համար հանրային ծառայությունները առավել հասանելի ու մատչելի լինեն: Ինչքան ավելի մոտենա համայնքների խոշորացման գործընթացի ավարտը, այնքան ավելի սուր է դրվելու այս հարցը, եւ այս իմաստով կենտրոնական իշխանությունները պետք է դրսեւորեն քաղաքական կամք՝ արդեն այսօր ձեռնարկելով որոշակի քայլեր լիազորությունների ապակենտրոնացման գործընթացն սկսելու համար:

**Վ. ՇԱԲԱՍՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀՀ Տ ֓ Փորձագիտական թիմ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՖՍ ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՅՈՒԹԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017թ. ապրիլի 26-ին Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՍ) «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակում հայտարարել էր փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթ: Մրցույթի հրավերի ժամանակացույցի համաձայն, մայիսի 19-ին, ժամը 17:00-ին, լրացավ հայտերի ընդունման վերջնաժամկետը:

Ստացված հայտերը կդիտարկվեն մրցութային հանձնաժողովի կողմից՝ համաձայն սահմանված չափորոշիչների, եւ կընտրվեն հաղթողները: Հաղթող ծրագրերի ցանկը կհրապարակվի:

Ֆինանսավորման համար բավարար միավորների քանակ չստացած ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, մեկնաբանություններ կամ բացատրություններ չեն տրամադրվի:

Համայնքների ֆինանսիստների միավորում

Հարգելի ընթերցող,

Ի՞նչ եք մտածում ամեն անգամ «Համայնք-ՀամաՏեղ» թերթը բացելիս, ի՞նչ ակնկալիքներ ու սպասումներ ունեք, ինչի՞ մասին եք ցանկանում կարդալ, բայց չեք գտնում այստեղ: Թերթի մասին ձեր կարծիքը շատ կարեւոր է մեզ համար: Գրեք մեզ հետեւյալ հասցեով՝ **Երեւան, Երվանդ Զոհրաբի 20, 4-րդ հարկ կամ madamyam@cofoamail.am** էլ. փոստին:

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՏԱՐԵԿԱՆ ՉԵԿՈՒՅՑ - 2016

Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՍ) ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում պատրաստում է հերթական տարեկան զեկույցը՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ տեղական ինքնակառավարման (ՏԻ) համակարգում տեղի ունեցած բարեփոխումների եւ զարգացումների վերաբերյալ: 2004 թվականից ի վեր պատրաստվող եւ հրատարակվող այս զեկույցների շարունակականությունն ապահովելու նպատակով, 2016 թվականին նվիրված զեկույցում առավելագույնս պահպանվելու են ՀՀ ՏԻ ծրագրային 7 ուղղությունների վերլուծության եւ գնահատման՝ նախորդ տարիներին կիրառված մեթոդաբանությունը եւ ձեւաչափերը: Սակայն այս զեկույցը նաեւ որոշակիորեն տարբերվելու է նախորդներից այն առումով, որ ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում, ծրագրի իրականացնող համընկերության անդամ-կազմակերպություններից՝ Համայնքների ֆինանսիստների միավորման եւ Հետազոտական ռեսուրսների կովկասյան



կենտրոնի փորձագետները նախաձեռնություն են հանդես բերել՝ իրականացվող վերլուծությունների արդյունքում եւ այս բնագավառում միջազգային փորձի օգտագործմամբ, գնահատելու եւ ինդեքսավորելու ՀՀ ՏԻ համակարգը: Ներկայումս այդ աշխատանքներն ընթացքի մեջ են: Դրանք

կատարվում են ՏԻ պատշաճ կառավարման 12 սկզբունքներին համապատասխան ընտրված որոշակի ցուցիչների օգնությամբ, որոնք խմբավորվել են ըստ ՏԻ առանձին գործառնությունների եւ բնագավառների: Յուրաքանչյուր բնագավառը եւ գործառնությունը ներկայացնող ցուցիչների սահմանմամբ, այնուհետեւ՝ դրանց գնահատմամբ տրվելու է ՏԻ տվյալ բնագավառի բալային գնահատականը: ՏԻ բոլոր բնագավառները գնահատելուց հետո, հանրագումարվելու է ՀՀ ՏԻ համակարգի ինդեքսավորված թվային գնահատականը (համաթիվը):

Նշենք նաեւ, որ սա առաջին փորձն է՝ առանձին ուղղությունների ինդեքսավորմամբ տալու ՀՀ ՏԻ համակարգի տարեկան թվային գնահատականը, որի միջոցով հնարավոր կլինի համեմատել համակարգի գործունեությունը տարբեր տարիներին, ինչպես նաեւ՝ թվային գնահատականներ տալ համակարգում իրականացվող բարեփոխումների ու զարգացումներին:

ՀՀ Տ ֓ փորձագիտական թիմ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՈՒԼՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես նշել էինք «Համայնք-ՀամաՏեղ» թերթի խմբագրական խորհուրդը ժամանակ առ ժամանակ կանոնադաշտ համայնքների խոշորացման հետ կապված մամուլում տեղ գտած մտահոգություններին և կփորձի իր մեկնաբանությունները ներկայացնել դրանց վերաբերյալ:

Համայնքների խոշորացման շարունակվող գործընթացի լուսաբանման ողջ ժամանակահատվածում, կարմիր թելի նման, կարծես «փոխհամաձայնեցված» և ակնհայտ կողմակալ մեկնաբանմամբ, շահարկվում է բարեփոխումների արդյունքում աշխատատեղերի ստեղծման ակնկալիքը:

Պետք է հստակ պատկերացնել և գիտակցել, որ համայնքների խոշորացումը բնակիչների սոցիալական վիճակի բարելավմանը և նրանց եկամուտների աճին ուղղված բարեփոխում է: Համայնքների խոշորացման գործընթացը ուղղակիորեն չի ենթադրում համայնքի տնտեսական ակնթարթային աճ, գործարարության ընդլայնում և այլն:

Համայնքների խոշորացման գործընթացը հանրային կառավարման բնագավառի բարեփոխումներ են, որոնք հետապնդում են տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման նպատակ և համայնքում ուղղակիորեն բոլոր աշխատատեղերը պահպանելու



կամ նորերը ստեղծելու համար չեն իրականացվում:

Իսկ թե ի՞նչ նպատակներով և ի՞նչ արդյունքների հասնելու համար է իրականացվում համայնքների խոշորացումը, դրա մասին առավել քան բազմիցս խոսվել է թե մամուլում և թե պաշտոնական խողովակներով, լրացուցիչ մեկնաբանման կարիք չենք տեսնում:

Այս հանգամանքի միտումնավոր կամ ակամա չգիտակցելն է հենց բերում այն շահարկումներին, թե «խոշորացման արդյունքում աշխատատեղեր չստեղծվեցին, որի հետևանքով ժողովուրդը ստիպված պետք է արտագաղթի»: Տպավորություն է ստեղծվում, թե երկրից տարիներ շարունակ տեղի ունեցող և

դեռ շարունակվող արտագաղթի պատճառը հենց համայնքների խոշորացման բարեփոխումներն են:

Երկրի ներկայիս սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում, համայնքի բնակիչը, որը միզուցե այդքան էլ տեղյակ չէ գործընթացի մանրամասներին, արդարեւ փորձում է ընթացող բարեփոխումներում փայփայել որոշակի հույսեր և իր սոցիալական վիճակի բարելավման գործնական քայլեր տեսնել: Սա միանգամայն հասկանալի և ընդունելի է:

Բայց, երբ վերոնշյալ միտքը փորձում են շահարկել պաշտոնյաները և «փորձագետները», որոնք այս կամ այն կերպ առնչվում են տեղական ինքնակառա-

վարման ոլորտին (համայնքի նախկին ղեկավար, ավագանու անդամ, տեղի դպրոցի տնօրեն, պետական կառավարման համակարգի աշխատող, ՏԻ ոլորտով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ կամ դրանով հետաքրքրված անձինք), ապա այստեղ արդեն գործ ունենք իրականությունը միտումնավոր խեղաթյուրելու, չիմացության ակնհայտ դրսևորման և սեփական շրջանում ստահող լուրեր տարածելու արատավոր երեւույթների հետ:

Մամուլի մի քանի հրապարակումներում համայնքների խոշորացման հետ են կապում վերջերս շրջանառության մեջ դրված՝ հանրակրթական դպրոցների օպտիմալացման գործընթացը: Պետք է հստակ իմանալ, որ բացի Երեւանի համայնքից, ՀՀ ոչ մի այլ համայնքի պատվիրակված չէ հանրակրթական դպրոցների կառավարումն ու դրանց գործունեության կազմակերպումը: Այսինքն, տեղական իշխանությունները և համայնքը ուղղակիորեն որեւէ կապ չունեն ոչ դպրոցների պահպանման ու ֆինանսավորման, ոչ դրանց բացվել-փակվելու և ոչ էլ վերջիններիս տնօրեններին ու աշխատողներին նշանակելու կամ աշխատանքից ազատելու հետ:

Դպրոցները պետական կարգավիճակ ունեն և ենթակա չեն տեղական իշխանություններին: Դպրոցների օպտիմալացման

գործընթացը կապել համայնքների խոշորացման հետ՝ առնվազն անազնիվ է և սեփական անտեղյակության բարձր աստիճանի վառ դրսևորում:

Մամուլում հաճախ խոսվում է այն մասին, որ համայնքների խոշորացման հաջորդ փուլը սկսելուց առաջ տեղական հանրաքվեներ չեն անցկացվում, բնակիչների կարծիքը հաշվի չի առնվում: Սա ավելի քան արդարացի մտահոգություն է: Սակայն պետք է նշել, որ 2015թ. դեկտեմբերի 6-ին իրականացված սահմանադրական բարեփոխումներով ՀՀ Սահմանադրությունից հանվել է վարչատարածքային փոփոխությունների դեպքում համապատասխան համայնքներում տեղական հանրաքվեներ անցկացնելու դրույթը: Ելնելով սրանից՝ 2016թ. համայնքների խոշորացման 15 փնջերում տեղական հանրաքվեներ պարզապես չանցկացվեցին: Այլ կերպ ասած, ըստ էության, օրենքի որեւէ պարտադիր պահանջ չի խախտվել, մինչդեռ բնակիչների շրջանում կարծիքի հարցում անցկացնելու այլ մեխանիզմներ (այդ թվում՝ էլեկտրոնային) նույնպես գոյություն ունեն: Այլ հարց է, թե բարեփոխումներ իրականացնող իրավասու մարմինների կողմից ինչքանով արդյունավետ են կիրառության մեջ դրվում այդ մեխանիզմները, և արդյո՞ք բոլոր ցանկացողները հնարավորություն ունեն ընթացող բարեփոխումների վերաբերյալ կարծիք հայտնելու: Առավել ևս, որ միտում կա ցանկացած հանրային հարցում փոխարինել խորհրդարանական լուծումներով, ինչը անհրաժեշտ է, բայց բավարար չէ:

Անշուշտ, վերը նշված հարցերը քննարկման արժանի են:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱԲԱԿՉՅԱՆ
Ղ. ՄԱՐԳՐՅԱՆ
Կմբագրական խորհրդի անդամներ

Երիտասարդների ներգրավումը համայնքային խնդիրների լուծման գործընթացին ռազմավարական նշանակություն ունի համայնքների զարգացման համար, քանի որ դրանով է պայմանավորված զարգացման երկարաժամկետ ընթացքը: Ներգրավման ձեռք, սակայն, եւս հսկայական կարեւորություն ունի, քանի որ շատ բան է կախված այն դերակատարումից, որը երիտասարդները կստանան իրենց համայնքի հրատապ խնդիրների լուծման ընթացքում:

Եվրասիա համագործակցությունն հիմնադրամի կողմից 2017թ. ապրիլ ամսին անցկացված «Մարդամեջ» սոցիալ նորարարական ճամբարի նպատակն էր ներգրավել երիտասարդներին համայնքային խնդիրները բացահայտողի, դրանց վերաբերյալ փորձագիտական գիտելիք հայթայթողի և սեփական ուժերով նորարարական լուծումներ մշակողի դերում:

Եւրոպա աշխատանքի արդյունքում մշակվեցին յոթ ծրագրային գաղափարներ, որոնք ներկայացվեցին սոցիալական, տեղական ինքնակառավարման, հակակոռուպցիոն և մարդու իրավունքների ոլորտում աշխատող փորձագետներից կազմված ժյուրիի դատին:

«ՄԱՐԴԱՄԵՋ» ՍՈՑԻԱԼ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՄԲԱՐ

Գաղափարների մշակման փուլում «Մարդամեջին» մասնակցող շուրջ վաթսուս երիտասարդներին առաջադրվել էր երեք հիմնական պայման՝ գաղափարները պետք է լինեին՝ ա) սոցիալական, տեղական ինքնակառավարման, հակակոռուպցիոն կամ մարդու իրավունքների ոլորտներից որեւէ մեկին հասցեագրված, բ) նորարարական, գ) ցանցային:

«Մարդամեջի» ակտիվ և ստեղծագործ աշխատանքի արդյունքում ժյուրիի հավանությանը արժանացան ներկայացված 7 գաղափարներից 3-ը՝ «Մալա մա», Street Art և «ՏԻՄ Պուլս»:

«Մալա մա» ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների կանանց և աղջիկների դերը, ինչպես նաև՝ նրանց ներգրավածության աստիճանը հասարակական կյանքում՝ օգտագործելով նման փորձ ունեցող այլ կանանց հաջողության պատմությունները:



Street Art նախագծի հիմքում ընկած է Հայաստանում լայն տարածում գտած փողոցային արվեստի միջոցով սոցիալական խնդիրների հասցեագրման գաղափարը: Ծրագրի շրջանակներում ստեղծված կերպարները, տեքստի և պատկերի համարմամբ հայտնվելով համայնքի տարբեր շենքերի վրա, կբարձրաձայնեն արդիական սոցիալական խնդիրները, ինչպես նաև կարձանագրեն

այն դրական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում համայնքում: Կերպարները կտեղափոխվեն ոչ միայն տարածական, այլ նաև ժամանակային իմաստով՝ մեծանալով ու փոխվելով համայնքի ներսում:

«ՏԻՄ Պուլս» ծրագրի հիմնական նպատակը ավագանու անդամների ռեյտինգավորման հիման վրա խաղի մշակումն է, որի միջոցով համայնքի բնակիչներից կազմված թիմերը կմր-

ցակցեն իրար հետ՝ իրենց թիմերին «ամրագրված» ավագանու անդամներին առաջադրելով համայնքային տարբեր խնդիրներ և նպատակով վեջիններիս աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Հատկանշական է, որ խաղը կընթանա ոչ միայն իրական կյանքում, այլ նաև առցանց:

Այս տարվա «Մարդամեջի» արդյունքում ընտրվեցին երեք ծրագրեր, որոնք իրականացվելու են Հայաստանի 8՝ Վայոց Ձորի, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի, Արմավիրի, Տավուշի և Լոռու մարզերի տարբեր համայնքներում՝ նպաստելով սոցիալական, տեղական ինքնակառավարման, հակակոռուպցիոն և մարդու իրավունքների ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումներին երիտասարդների ակտիվ ներգրավմանը:

«Մարդամեջ» սոցիալ նորարարական ճամբարը կազմակերպվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող երկու՝ Մեդիան բաղադրանքների տեղեկացված մասնակցության համար (ՄԵՏՍ) և Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը (ՀամաՏեղ) ծրագրերի շրջանակներում:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԶԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ

Ամփոփվեց «Գեղարեգ» կրթամշակութային հասարակական կազմակերպության (ԿՄՅԿ) կողմից իրականացվող «Համայնքային մասնակցություն և կառավարում» ծրագիրը



2016թ. օգոստոս ամսից «Գեղարեգ» ԿՄՅԿ-ն իրականացրել է «Համայնքային մասնակցություն և կառավարում» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր բնակչությանը ներգրավել համայնքային խնդիրների բացահայտման և դրանց լուծման տարբերակների մշակման գործընթացներում, ապահովել նրանց մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը և հզորացնել քաղաքացիական խմբերին:

Շուրջ 9 ամիս Գավառում, Սարուխանում, Կարմիրգյուղում և Նորատուսում «Գեղարեգ» ԶԿ-ն աշխատել է տեղական

ինքնակառավարման մարմինների և երիտասարդական խմբերի հետ: Զգուրացնել երիտասարդական խմբերին և ապահովել հաշվետու ՏԻՄ և մասնակցային կառավարում. այս նպատակն էին իրենց առջև դրել ծրագրի պատասխանատուները:

«Համայնքային մասնակցություն և կառավարում»-ը կյանքի է կոչվել՝ Համայնքների ֆինանսիստների միավորման փոքր դրամաշնորհների շրջանակում՝ ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ իրականացվող ՀամաՏեղ ծրագրով: Ծրագրի շրջանակներում համայնքներում ստեղծվել են երիտասարդական ակտիվ խմբեր, կազմակերպվել են անցած տարվա բյուջեների կատարողականների և 2017թ. բյուջեների նախագծերի հանրային լուսմներ, տպագրվել են տեղեկատվական թերթիկներ և տեղեկագրեր, բացահայտվել են առկա հիմնախնդիրները, որոնք ներկայացվել են ավագանու և համայնքների ղեկավարներին, ապահովվել է բնակչության մասնակցությունը ավագանու նիստերին և դրանց լուսաբանումը: Միջամայնքային մշակութային կապն ամրապնդելու նպատակով կազմակերպվել է «Բերք ու բարիք» փա-

ռում ստեղծվել են երիտասարդական ակտիվ խմբեր, կազմակերպվել են անցած տարվա բյուջեների կատարողականների և 2017թ. բյուջեների նախագծերի հանրային լուսմներ, տպագրվել են տեղեկատվական թերթիկներ և տեղեկագրեր, բացահայտվել են առկա հիմնախնդիրները, որոնք ներկայացվել են ավագանու և համայնքների ղեկավարներին, ապահովվել է բնակչության մասնակցությունը ավագանու նիստերին և դրանց լուսաբանումը: Միջամայնքային մշակութային կապն ամրապնդելու նպատակով կազմակերպվել է «Բերք ու բարիք» փա-

ռատոն, անցկացվել շարադրության մրցույթ:

«Ծրագրի արդյունավետությունը գագցվել է դրա իրականացման առաջին օրերից», - նշում են շահառու համայնքների ներկայացուցիչները: Առողջ համագործակցության արդյունքում այսօր ակտիվացել է ՏԻՄ-համայնք կապը: Երիտասարդներն ու ԶԿ-ի ակտիվ անդամները մասնակցել են նաեւ համայնքների հնգամյա զարգացման ծրագրերի մշակման գործընթացներին: Ծրագրային թիմի և համայնքների ղեկավարները խմբերում ներգրավված կանանց հետ հանդիպել և նաեւ ԶԶ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը:

Համաձայն «Գեղարեգի» որդեգրած քաղաքականության՝ «Համայնքային մասնակցություն և կառավարում» ծրագիրը են ունենալու է իր շարունակականությունը: Անկախ ֆինանսական միջոցներից՝ երիտասարդները պատրաստ են տարբեր նախաձեռնություններ իրականացնել կամավոր:

Սեփ.լր.



ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԵՐԻՆ

Հետազոտական ռեսուրսների կոմպլեքսային կենտրոն-Հայաստան հիմնադրամը՝ Համայնքների ֆինանսիստների միավորում ԶԿ-ի հետ համատեղ, երկրորդ տարին անընդմեջ իրականացնում է հետազոտական դրամաշնորհային ծրագիր: Վերջինս իրագործվում է ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում և տևում է 3-4 ամիս: Հետազոտական ծրագրի նպատակն է նպաստել քաղաքացիների մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը, ինչպես նաեւ զարգացնել երիտասարդ դրամաշնորհառուների հետազոտական կարողությունները: 2017թ. դրամաշնորհառուները հինգ են՝ Արթուր Բաբայան, Լենա Մամիկոնյան, Արման Գասպարյան, Սոնյա Մարյան և Օֆելյա Գրիգորյան: Նրանց հետազոտության թեմաներն անչվում են տեղական ինքնակառավարման և քաղաքացիական մասնակցության փոփոխարարությունների տարբեր սպասելուներին: Երիտասարդ հետազոտողներից մեկն, օրինակ, փորձում է հասկանալ, թե ինչպես է համայնքի չափսը Հայաստանում ազդում տեղական ինքնակառավարման ժողովրդավարության մակարդակի վրա, իսկ մյուսը փորձում է չափել հայաստանցիների դիրքորոշումները ՏԻՄ աշխատանքներին համայնքի բնակիչների մասնակցության վերաբերյալ: Հետազոտական ծրագրի ավարտին դրամաշնորհառուները կհանրայնացնեն իրենց հետազոտության արդյունքները գրավոր զեկույցների և հանրային ներկայացումների միջոցով:

Սեփ.լր.

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿՉԲՈՒՆՔԸ՝ «ԱՎԵԼԻՒՆ՝ ԱՎԵԼԻ»

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը մայիսի 17-ին ներկա է գտնվել Արագածոտնի մարզխորհրդի նիստին, որին մասնակցում էին համայնքների ղեկավարները, մարզպետարանի աշխատակազմը, մարզային տարբեր կառույցների ներկայացուցիչներ:

Նիստին զեկույցումներ են արվել համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի, համայնքների զարգացման 5-ամյա ծրագրերի մշակման, մարզային ներդրումային ծրագրերի, «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքների մասին: Մարզխորհրդի նիստում ներկայացվել է նաեւ գյուղատնտեսական ոլորտում իրականացված աշխատանքների ընթացքը:

ՏԿՉ նախարար Դավիթ Լոքյանն իր խոսքում շնորհակալություն է հայտնել մարզպետին և համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը լավագույնս կազմակերպելու համար, ինչի արդյունքում ակնկալվում է, որ մարզը 2017թ. կունենա առավելագույն ցուցանիշներ:

Միաժամանակ նախարարը ներկայացրել է համայնքների զարգացմանն ուղղված կառավարության նոր տեսլականը. «Ձեր մարզը եզակիներից է, որը 2017թ. նախորդ տարվա համեմատ իր սեփական եկամուտների 18% պլանային աճ է ֆիքսել: Տեղեկացնեմ, որ այն համայնքապետերը, որոնք չարչարվում են և իրենց բյուջեներն ավելացնում են, որոնք ջանք



Համայնքային կառավարման

են թափում, որ իրենց սեփական եկամուտները հավաքագրվեն, աշխանք ֆինանսավորման պարագայում ստանալու են լրացուցիչ միջոցներ: Համայնքների հետ աշխատանքում գործելու է «Ավելին՝ ավելի» սկզբունքը: Դ. Լոքյանը կարեւորել է նաեւ այն օրենսդրական փոփոխությունները, որոնք արվելու են համայնքային բյուջեներն ավելացնելու համար: Նախարարը հորդորել է համայնքների ղեկավարներին ակտիվացնել աշխատանքները և ներկայացնել նոր ծրագրեր:

Անդրադարձ է եղել նաեւ Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների գործընթացին: Արդեն խոշորացված համայնքներում իրականացված աշխատանքների մասին համապարփակ տեղեկատվություն ներկայացնելով՝ Դավիթ Լոքյանն ասել է. «Կա համայնք, որն ունի 400-500 բնակիչ, և խոսում ենք շատ մեծ բաներից: Խոսում ենք տնտեսական,

ներդրումային ծրագրերից: Բոլորիս համար էլ հասկանալի է, որ այդպիսի համայնքը տրամաբանորեն, մարդկային կապիտալի տեսանկյունից չի կարող այդ կարգի աշխատանքներ իրականացնել: Այսօր մեր խոշորացված յուրաքանչյուր համայնքում ամսվա 60 -125 մլն դրամ առանձնացված է կապիտալ ծախսերի համար: Եվ պետությունն էլ հիմնականում իր օժանդակությունն ուղղելու է այդ համայնքները»:


Նախարարն անդրադարձել է նաեւ կրթության և առողջապահության ոլորտներում առկա հիմնախնդիրներին, մարզից ստացված ներդրումային ծրագրերին, մի շարք հանձնարարականներ տվել:

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանն էլ ներկայացրել է «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակում արված և անելիք աշխատանքները, խոսել համայնքների բարեկարգման, զարգացման իրատեսական ծրագրերի կազմման անհրաժեշտության և այլ հարցերի մասին: Անդրադառնալով կրթության և առողջապահության ոլորտներին, մարզպետը նշել է, որ դրանք իրենց ամենօրյա ուշադրության ներքո են: Պարբերաբար ուսումնասիրություններ են արվում, տարբեր ոլորտների պատասխանատուների հետ կազմակերպվում են քննարկումներ, տրվում են հանձնարարականներ:

Մարզխորհրդի նիստի ավարտին նախարար Դավիթ Լոքյանն ու մարզպետ Գաբրիել Գյոզալյանը պարզաբանումներ են տվել համայնքապետերին հուզող հարցերին:

mtad.am

ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՅԱՑՔՈՎ



2011թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման հայեցակարգին, եւ հանրապետությունում մեկնարկեց վարչատարածքային բարեփոխումների, մասնավորապես՝ համայնքների խոշորացման գործընթացը: Դրա արդյունքում 2016 թվականին ձեւավորվեց 18 խոշորացված բազմաբնակավայր համայնք: Նախորդ տարվա ընթացքում գործընթացն իրականացվեց նաեւ Արարատի մարզում, որտեղ միավորվեցին Ուրցածոր, Լանջանիստ, Շաղափ համայնքները, եւ ստեղծվեց մեկ բազմաբնակավայր համայնք՝ Ուրցածորը:

Վարչատարածքային բարեփոխումների դրական եւ բացասական կողմերի, համայնքում առկա խնդիրների, առաջիկա անելիքների մասին գրուցեցինք համայնքի ղեկավար Ռաֆիկ Անդրեասյանի հետ:

- Ինչպե՞ս եք գնահատում հանրապետությունում իրականացվող վարչատարածքային բարեփոխումները, մասնավորապես՝ համայնքների խոշորացման գործընթացը:

- Ի սկզբանե կարելու էր եւ վարչատարածքային բարեփոխումների իրականացումը եւ նորմալ ու ողջունելի եւ համարում համայնքների խոշորացման գործընթացը: Բոլորս էլ գիտենք, որ այսօր մեր հանրապետությունում կան բազմաթիվ համայնքներ, որոնք բնակչության թիվը երբեմն նույնիսկ հարյուրի էլ չի հասնում. ոչ նորմալ դպրոց ունեն, ոչ ենթակառուցվածքներ: Ունեն միայն բազմաթիվ խնդիրներ ու փոքր բյուջե, որը հնարավորություն չի տալիս լուծել այդ հարցերը, այսինքն, ավելորդ է արդեն խոսել համայնքի կայացման ու զարգացման մասին: Իսկ խոշորացումից հետո պետական ներդրումներով եւ միավորված բյուջեով հնարավոր կլինի որոշակի հարցեր լուծել: Միակ խնդիրը, որ խանգարում է խոշորացման գործընթացին, ապակենտրոնացումն է, որը դանդաղում է:

Խոշորացման արդյունքում ձեւավորվեց նաեւ մեր բազմաբնակավայր համայնքը, որի մեջ ընդգրկվեց երեք համայնք: Դրանցից մեկն ընդամենը սարատեղի է, որովհետեւ այդ բնակավայրը ստեղծվեց Խորհրդային միության փլուզումից մի քանի տարի առաջ եւ այդպես մնաց ու դասվեց համայնքների շարքին: Մյուս բնակավայրը՝ Շաղափը, համեմատաբար կայացած է, ունի 1000 բնակիչ, բայց չկան զարգացման նախադրյալներ. ունի մանկապարտեզի շենք, բայց հնարավորություն չունի աշխատեցնելու, չկան խմբակներ...

Խոշորացման գործընթացի դրական արդյունքներից մեկը մեր համայնքում ար-

դեն կա. մեր մանկապարտեզում, որտեղ գործում էր 3 խումբ, արդեն բացել ենք նաեւ չորրորդ խումբը եւ ընդունել Շաղափի մանկապարտեզի տարիք ունեցող երեխաներին, որոնք տեղափոխվելու համար արդեն իսկ գործում է նաեւ միջհամայնքային տրանսպորտ՝ համայնքային միջոցներով: Մշակույթի ոլորտում եւս զարգացում կլինի, քանի որ մենք ունենք խմբակ, որի կազմում կարող են ընդգրկվել նաեւ միավորված բնակավայրերի երեխաները:

Տրանսպորտի ներդրման արդյունքում կամրանա նաեւ կապը դպրոցների միջեւ, որը շատ կարեւոր է:

Որպես համայնքի ղեկավար, մեր պետության զարգացումը տեսնում եմ միայն ու միայն դպրոցների զարգացման մեջ, քանզի, իմ կարծիքով, պետությունը սկսվում է դպրոցից, կրթությունից: Եթե չունենք դաստիարակված սերունդ, հզոր պետություն ունենալ չենք կարող: Ես կարծում եմ նաեւ, որ դպրոցի կառավարումն էլ պետք է համայնքն իրականացնի:

- Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում որքանո՞վ են ներառված միավորված բնակավայրերի խնդիրները:

- Դեռեւս նախընտրական շրջանում դիմել եմ բնակավայրերի ակտիվ քաղաքացիներին, դպրոցներին, որ ներկայացնեն հարցեր, առաջարկություններ, իսկ արդեն համայնքապետի պաշտոնում ընտրվելուց հետո այցելել եմ բնակավայրեր, տեղում հանդիպել երիտասարդների, դպրոցների կուլեկտիվների, բնակիչների հետ, լսել նրանց



կարծիքները, առաջարկությունները, որոնց մեծ մասը ներառված է համայնքի զարգացման հնգամյա ծրագրում: Պաշտոնավարման տարիների ընթացքում իմ հաջողությունը համարում եմ այն, որ ցանկացած որոշում կայացվել է հանրային կարծիքը լսելուց, քննարկելուց հետո, միշտ հաշվի է առնվել բնակչի կարծիքը:

- Ո՞րն է համայնքի գերխնդիրը:

- Ուրցածոր բազմաբնակավայր համայնքում այսօր առաջնային են համարվում ջրամատակարարման, կոյուղու հետ կապված խնդիրները, ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը:

Այսօր մենք առաջնահերթ տեխնիկական վերազինման խնդիրն ենք դրել եւ այս հարցով դիմել ենք տարածքային զարգացման հիմնադրամ, որովհետեւ մեր բնակչի ապրուստի միջոցն անասնապահությունն է եւ, քանի որ դաշտամիջյան ճանապարհները շատ վատ վիճակում են, արտազնա արոտների մեկնելը շատ դժվար է ու ծախսատար:

Պետք է կանոնակարգել աղբահանության խնդիրը, որ միշտ եղել է, ինչպես

նաեւ՝ խմելու ջրի մատակարարման հարցը, որովհետեւ անընդունելի եմ համարում այն, որ բնակչին երկու օրը մեկ անգամ է ջուր տրվում:

Կարճ ժամանակում նաեւ որոշակի աշխատանքներ են կատարվել. լուսավորություն է անցկացվել Շաղափ բնակավայրում, որտեղ մինչեւ վերջերս ընդամենը մեկ փողոց ուներ լուսավորություն, դպրոցում կառուցվել է սանհանգույց... Մեծ համայնք, շատ հոգսեր ու խնդիրներ, որոնք կարծում եմ, որ ժամանակի ընթացքում կլուծվեն:

- Խոշորացման գործընթացի ցավոտ կողմերից մեկը, ըստ հասարակության, աշխատանքների կրճատումն է:

- Դա թյուր կարծիք է, համայնքապետարանը երբեք չպետք է դիտվի որպես աշխատատեղ, համայնքապետարանը պետք է լինի աշխատանքների կազմակերպման, ծառայությունների մատուցման վայր:

- Եթե խոշորացվող բազմաբնակավայր համայնքներում չլինեն ներդրումային ծրագրեր, պետական աջակցություն, Ձեր վերաբերմունքը նույնը կլինե՞ր: Ըստ Ձեզ, ներդրումային ծրագրերի բացակայությունը կարո՞ղ է անդրադառնալ գործընթացի վրա:

- Ես ողջունելի եւ անհրաժեշտ եմ համարել խոշորացման գործընթացի ի սկզբանե նախանշված տարբերակը, բայց ոչ այն, ինչ ծրագրվում է իրականացնել հետագայում:

Ես կարծում եմ, որ միավորվող համայնքների թիվը տասը չպետք է գերազանցի, եւ պետք է հաշվի առնվի նաեւ այդ բնակա-

ԽՈՇՈՐԱԳՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ՝ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունը (ՏԿԶ)՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ համատեղ շարունակում է ՀՀ խոշորացված համայնքներում վարչատարածքային բարեփոխումների վերաբերյալ քննարկումների շարքը: Ս.թ. մայիսի 18-19-ին ՀՀ ՏԿԶ նախարարության ՏԻՄ վարչության պետ Աշոտ Գիլոյանը՝ ԳՄՀԸ գործընկերների հետ այցելել է Դիլիջան, Ալավերդի եւ Թումանյան համայնքներ:

Այցելության նպատակն էր համայնքապետին եւ աշխատակազմին, ավագանուն, վարչական ղեկավարներին օրենսդրական եւ կանոնակարգող դաշտում նորությունները ներկայացնելը, դրանց ներքո համապատասխան աշխատակիցների անելիքների, այդ թվում՝ իրավունքների եւ պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացումը, համայնքներում փաստացի վիճակի մասին տեղեկությունների հավաքագրումը, ՏԻՄ գործընկերների հետ առկա խնդիրների շուրջ մտքերի փոխանակումը եւ հետխոշորացման շրջանում ի հայտ եկող մարտահրավերներին լուծումներ տալու ուղիների համատեղ որոնումը:

ԳՄՀԸ ներկայացուցիչներ Գ. Խաչիկյանը եւ Ա. Զեչիշյանը Դիլիջանի եւ Թումանյանի ՏԻՄ-երին ներկայացրել են իրենց կազմակերպության «Տեղական ինքնակառավարում» ծրագրով նախատեսված միջոցառումները եւ ծրագրի հետ կապված անելիքները:

ԳՄՀԸ փորձագետ Ռ. Տոռոյանը եւ ներկաները մտքեր են փոխանակել համայնքների խոշորացման ընթացքում առկա ձեռքբերումների եւ խնդիրների շուրջ՝ ուղղված առաջինների հետեւողական ընդլայնման հնարավորությունների ընդլայնմանը եւ վերջիններիս վերացմանը:

Աշոտ Գիլոյանն ու ԳՄՀԸ աշխատակիցները այցելել են նաեւ Ալավերդի համայնքի Զաղաքացիների սպասարկման գրասենյակ (ԶՍԳ), որտեղ աշխատակիցների եւ համայնքապետի հետ քննարկել են ԶՍԳ գործունեությունը եւ դրա ազդեցությունը ծառայությունների որակի, հասանելիության եւ մատուցման տեւողության վրա:

Ալավերդու ԶՍԳ աշխատակազմը ներկայացրել է վիճակագրական եւ որակական տվյալներ գրասենյակի կատարողականի վերաբերյալ՝ գոհունակություն հայտնելով ԶՍԳ շնորհիվ աշխատանքների արդյունավետության բարձրացման եւ ծառայությունների մատուցման բնագավառում բարելավումների կապակցությամբ:

Ինքնավարության տարրերը II - IV դարերում

Ելելով ժամանակի պատմիչների վկայությունների վրա հենված պատմական ուսումնասիրություններից՝ Մեծ Հայքում II - IV դարերում եւս գյուղական համայնքն իրենից ներկայացնում է տնտեսական կայուն օջախ, որի բոլոր անդամները կամ «ծխերդ» ունենին հավասար իրավունքներ: Գյուղական համայնքն ունեցել է կոլեկտիվ հողատարածություն (Մեծ Հայքի գերագույն հողատերը համարվել է թագավորը), որը բաժանվել է երդերի միջև՝ ըստ արական շնչի: Յուրաքանչյուր երդ ինքն է տնօրինել իր հողաբաժինը: Համայնքի ներսում երդերին բաժանվող հողակտորը Ազաթանգեղոսի վկայությամբ կոչվել է «հող երդոյ»: Հողի հարկը պայմանավորված է եղել յուրաքանչյուր շրջանի հողի բերրության աստիճանով, տվյալ տարվա բերքով եւ ըստ այդմ կազմել է բերքի 1/3, 1/5 եւ 1/6 մասը: Ծինականը պետությանը վճարել է «գլխահարկ»՝ ըստ ընտանիքի անդամների թվի, «ծխահարկ»՝ յուրաքանչյուր ծխի վրա դրված հարկ եւ «անասնահարկ»: Ծինականը պարտավորություն է ունեցել նաեւ եկեղեցու հանդեպ, վճարելով եկեղեցուն իր եկամուտի մեկ տասներորդ մասը՝ «տասանորդը»: Հարկերը պետությանը մուծել են գեղջավազների կամ դեհկանների միջոցով:

Հելլենիզմի շրջանի համեմատ այս դարերում գյուղի ինքնավարությանն առնչվող հարցերում արդեն էական տարբերություններ են երեւան գալիս: Եթե հելլենիզմի շրջանում գյուղական համայնքը ինքնակառավարվել է համայնականների կողմից ընտրված ավագանու եւ գյուղապետի կողմից, ապա III - V դարերում, ըստ պատմիչների վկայությունների, գյուղը ղեկավարել է գյուղական ավագը՝ «ծեր, գեղջաւագ, դեհկան»: Դեհկանն ընտրվել է, թե նշանակվել՝ այս մասին չի հաջողվել տեղեկատվություն գտնել: Կարելի է ենթադրել, որ գործուն ծխական խորհուրդ ունեցող համայնքներում հենց ընտրովի խորհուրդը կարող էր նշանակել դեհկանին: Վերջինս հավաքել է հարկերը, հաշվառել եւ բաշխել պարհակները: Այսուհանդերձ, գյուղական համայնքի ներսում դեռեւս շատ դարեր պահպանվել է հավասար հողօգտագործման սկզբունքը, եւ կատարվել են արտերի պարբերական վերաբաժանումներ: Հողերը բաժանվել են «ըստ մարդաթուխի» եւ «հաւասար»՝ վիճակահանությամբ: Վարելահողերից բացի, կային արտատեղիներ, բարձր լեռնային մարգագետիններ, նախրատափեր, անտառներ,

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Համայնք-ՀամաՏեղ» ամսաթերթը շարունակում է իր ընթերցողին ներկայացնել տեղական ինքնակառավարման՝ հայկական մոդելների մասին՝ Արեւիկ Հարությունյանի «Պանկուից մեր օրերը» եզակի աշխատության ուշագրավ էջերը: Գիրքը տպագրվել է 2008թ., «Տեղական ինքնակառավարման զարգացմանն աջակցող տեղեկատվական-ուսուցողական կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ եւ Հայաստանում Եվրոպական պատվիրակության ֆինանսական աջակցությամբ:

որոնցից կարող էին օգտվել համայնքի բոլոր անդամները: II - V դարերի քաղաքային համայնքները պատմագիտության մեջ հիմնականում ներկայացված են տնտեսական եւ առեւտրական հարաբերությունների իրավիճակի տեսանկյունից: Մինչդեռ ինքնավարության մասին տեղեկությունները խիստ սուղ են: Պատմաբանները մատնանշում են, որ քաղաքները նախկինի պես ինքնավարություն ունենին, եւ որ ինքնավարության

են նաեւ արհեստագործական միությունները եւ կրոնական համայնքները, որոնք ղեկավարվել են սեփական իրավասուությամբ, տեղական իրավունքներով եւ տեղական սովորություններով: Միություններն ու կրոնական համայնքները պարտավոր էին համապարտ երաշխավորությամբ հարկերը վճարել եւ պարհակները կատարել: Քաղաքներից առավել ուսումնասիրված Արտաշատը, որը թագավորանիստ մայրա-

Վաղ ֆեոդալիզմ. դասակարգային շերտավորում

Վաղ միջնադարյան Հայաստանում սկսված ֆեոդալականացման գործընթացը գնալով ընդգծում է սոցիալական տարբեր շերտերի միջեւ եղած սահմանագիծը: III - IV դարերում Մեծ Հայքի ողջ ազգաբնակչությունը բաժանված էր երկու դասերի՝ բարձր ազատ (նախարար, հոգեւորական, մանր ազնվականություն) եւ ստորին: Ստորին

անգամ ավելի էր սպանված շինականի արյան գնից: Ազնվականը կամ ցածր հոգեւորականը շինականի պես մարմնական պատժի չի ենթարկվել կամ դատապարտվել տաժանակիր աշխատանքի: Հանցանք գործած շինականին կամ ազատ գեղջկուհուն աշխատանքի են դատապարտել բորոտանոցներում եւ գողենոցներում, որպեսզի այնտեղ պտտեին երկանքները՝ ալյուր կամ ծավար ստանալու համար, որոնցով կերակրել են բորոտներին: Ազատ գեղջկուհու իրավունքները առավելապես ճնշված էին: Կնոջ իրավունքը, որն արտահայտվել է, օրինակ, նույն աշխատանքի համար տղամարդու համեմատ վճարելու հարցում, հաստատվել է ըստ այն տեսակետի, թե մեկ տղամարդը երկու կին արժե: Իրենց հերթին շինականները՝ գյուղական համայնքի բնակիչները, ավելի մեծ իրավունքներ են ունեցել, քան ազարակներում մասնավոր հողաբաժիններին ամրացված կախյալ գյուղացիները՝ «բնակիչք ազարակին»: Վերջինս, ըստ էության, ճորտի կարգավիճակ է, երբ գեղջուկը աշխատել է հողատիրոջ կալվածքում եւ իրավունք չի ունեցել առանց հողատիրոջ կամքի հեռանալ նրա կալվածքից: Սակայն, ինչպես նկատել է պրոֆեսոր Մելիք Բախշյանը, ճորտատիրության այդպիսի մասսայական երեւոյթ այդ ժամանակաշրջանում (մ.թ. II - IV դարերում) չենք տեսնում, ինչը նա բացատրում է հետեւյալով, «գյուղատնտեսական արտադրությունը ապրանքային նշանակություն դեռ չէր ստացել: Ապրանքը դեռ չէր արտադրվում շուկայի համար, ուստի հայ ֆեոդալները շահագրգռված չէին սեփական կալվածատիրական տնտեսություններ ստեղծելու մեջ եւ անհրաժեշտություն չունեին ճորտեր ունենալ եւ նախապատվություն տալ ճորտական աշխատանքին»: Ասել է թե, ճորտ ունենալն այդ դարերում տնտեսապես դեռեւս անեկամտաբեր էր: Անշուշտ, դասային խտրականությունը ունեցել է շատ ավելի սուր դրսևորումներ:



գլուխ կանգնած էր քաղաքազուլիքը: Յուրաքանչյուր բազմազգ քաղաք ըստ ազգային պատկանելության բաժանված է եղել առանձին թաղամասերի՝ «գաղութների», որոնց գլխավորները կոչվել են «ռես»: Ինչպես այս դարաշրջանի գյուղական համայնքում, քաղաքի միազգ «գաղութային» համայնքներում եւս անդամները միմյանց հետ կապված են եղել համապարտ երաշխավորությամբ ու պատասխանատվությամբ: Յուրաքանչյուր «գաղութ» միասնաբար պատասխանատվություն է կրել հարկերի մուծման եւ պարհակների կատարման համար: Քաղաքներում առկա ինքնավարության ապացույց

քաղաք է եղել, ղեկավարվել է թագավորական տնտեսի՝ «շահապի» կողմից: Վերջինիս եւ նրա պաշտոնյաների պարտականությունն է եղել պահպանել քաղաքի կարգուկանոնը: Մայրաքաղաքի ղեկավարության վայրը եղել է քաղաքի կենտրոնում վեր խոյացող միջնաբերդում: Հատկապես Արտաշատը օտարազգի եւ հայ պատմիչների կողմից մատնանշվում է որպես տնտեսապես բարգավաճ եւ առեւտրական ուղիներում ռազմավարական նշանակության քաղաք: Այստեղ է արտադրվել հայտնի որդան կարմիրը: Արտաշատի հելլենիստական թատրոնում են բեմադրվել հեթանոսական դրամաները:

խավին են պատկանել քաղաքացիները՝ արհեստավորներ, մանր առեւտրականներ, որոնք համեմատաբար արտոնյալ վիճակում էին եւ «շինականները»՝ ազատ եւ կախյալ գյուղացիները: Ստորին խավը կոչվել է մեկ անունով՝ «ռամիկ»: Հին մատենագրության մեջ ռամիկների հիմնական մասը կազմող գյուղացիները կոչվել են «ռամիկ շինականք»: Ստորուկները եղել են իրավագուրկ եւ կոչվել «անկարգ»՝ իբրեւ դասային կարգից դուրս: Իրավունքների տեսանկյունից ազատությունը տարբեր «տեսակարար» կշիռ է ունեցել մանր ազնվականի եւ շինականի համար: Օրինակ, սպանված մանր ազնվականի արյան գինը երկու

Ըստ «Պանկուից մեր օրերը» գրքի, Հատվածները տպագրվում են հեղինակի համաձայնությամբ:

USAID FROM THE AMERICAN PEOPLE
«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթը Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրասենյակի վկայական՝ թիվ 03U063471, տրված՝ 06. 02. 2004 թ.
Թերթը իրատարակվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները միմյանց հեղինակներին են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ՇԱՀԱՍՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱԿԱՍՈՐԳՅԱՆ
ՀՈՒԹՍԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԸՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՈՒԿՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ Խմբագիր ԱՐԵՎԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մեր հասցեն՝ Երեւան, Երվանդ Զոչարի 20, 4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ. փոստ՝ info@cfao.am
Կայք՝ http://cfao.am/
Տպագրված է «Տիգրան մեծ» իրատարակչության տպարանում, ք. Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: